

Հաստատված է՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2018թ. հունիսի 22-ի նիստում

խորհրդի նախագահ՝ ռեկտորի պրոֆ. Ս. Մերոյանի կատարող՝

Ս. Մերոյան



ԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔՈԼԵԶԱՅԻՆ  
ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Գյումրի 2018

## I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը բխում է ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 28 – ի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007թ. մարտի 1 – ի №297 – ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №1330 – Ն որոշման պահանջներից և նպատակ ունի կանոնակարգելու «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ քոլեջում (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողական նպաստի, պետական և ներքուլեջային կրթաթոշակների նշանակման և տրամադրման գործընթացը:

## II. Ուսանողական նպաստի նշանակումը և տրամադրումը

2. Ուսանողական նպաստն ուսանողի ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում է:
3. Ուսանողի ուսման վարձի լրիվ փոխհատուցումը տրամադրվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ մասնակի փոխհատուցումը՝ Քոլեջի միջոցների հաշվին:
4. Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է՝
  - ա) առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձանց<sup>1</sup>.
  - բ) 1 – ին ու 2 – րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց<sup>2</sup>.

---

<sup>1</sup> Այս պահանջը բխում է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքից: Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, գրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18 – 23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, գրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

<sup>2</sup> Այս պահանջը բխում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքից: Այդ օրենքի 62 – րդ հոդվածի 4 – րդ պարբերության համաձայն՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1 – ին, 2 – րդ և 3 – րդ խումբ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ:

զ) զոհված զինծառայողի երեխա – ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձանց կամ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (զորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում) դիմորդներից ամենաբարձր միավոր ունեցող անձանց<sup>3</sup> (Քոլեջին ՀՀ կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում)։

դ) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին։

ե) ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, Քոլեջ ընդունված, սահմանամերձ<sup>4</sup> կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին<sup>5</sup>։

զ) առաջին կիսամյակում` ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տվյալ տարվա համար ուսման վարձի փոխհատուցման համակարգում ընդունելության կարգով ընդունված ուսանողին։

է) հաջորդ կիսամյակից` նախորդ ուսումնական կիսամյակում վարկանիշային գնահատման համակարգով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին` փոխատեղման արդյունքում, մրցութային հիմունքներով։

5. Առանց ծնողական խնամքի մնացած և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա – ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում ընդունված ուսանողներին, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին, ուսանողական նպաստ տրամադրվում է առաջին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1 – ին և 2 – րդ խմբի հաշմանդամներին ու հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած, ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են առաջին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում։

6. Ուսման վճարովի համակարգից անվճար համակարգին անցնելու փոխատեղումներն իրականացվում են ուսումնական տարին սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում։ Փոխատեղման արդյունքում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները տեղափոխվում են անվճար համակարգ, իսկ անվճար համակարգում ընդգրկված, սակայն բարձր առաջադիմություն չունեցող ուսանողներն տեղափոխվում են վճարովի համակարգ։ Քոլեջի տնօրենի կողմից երեք

<sup>3</sup> Այս պահանջը բխում է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքից։

<sup>4</sup> Սահմանամերձ բնակավայրերի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 17. 11. 1998թ. «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» № 713 որոշմամբ։

<sup>5</sup> Բարձր լեռնային բնակավայրերը սահմանված են ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 27 – ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերն ըստ բարձունքային նիշերի դասակարգելու մասին» № 756 որոշմամբ։

աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է անվճար և վճարովի համակարգ անցած ուսանողների ցանկը և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին:

7. Քոլեջը վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսին, հաշվի առնելով Քոլեջի ֆինանսական միջոցները և ուսանողի սոցիալական վիճակն ու բարձր առաջադիմությունը, իր միջոցների հաշվին կարող է մասնակի փոխհատուցել ուսման վճարը`

ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին.

բ) միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին.

գ) 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

դ) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

ե) 1 – ին կամ 2 – րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին.

զ) հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա – ուսանողներին.

է) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին.

ը) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված` բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին` ուսումնական հաստատության հայեցողությամբ.

թ) Քոլեջում առնվազն 5 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատակիցների երեխա – ուսանողներին:

8. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից երկու շաբաթ առաջ Քոլեջի տնօրենը տալիս է հայտարարություն ուսանողներին տեսանելի վայրում, ինչպես նաև ինտերնետային կայքում (առկայության դեպքում) վճարովի հիմունքով սովորող ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հիման վրա ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներ ընդունելու մասին:

9. Դիմումներն ընդունվում են հայտարարության օրվանից մինչև կիսամյակի ավարտը, իսկ տվյալ ուսումնական տարում Քոլեջ ընդունված ուսանողների դիմումներն ընդունվում են կիսամյակն սկսելուն նախորդող առաջին շաբաթվա ընթացքում: Ուսանողը ռեկտորի անունով դիմումի հետ մեկտեղ կցում է նաև սույն կարգի 7 – րդ կետի «ա» - «է» ենթակետերով սահմանված սոցիալական վիճակի վերաբերյալ հավաստող փաստաթղթերը (առկայության դեպքում):

10. Հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող երկու շաբաթվա ընթացքում ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումները և համապատասխան փաստաթղթերը քննարկվում են գիտ. խորհրդի նիստում՝ Քոլեջի տնօրենի ներկայացմամբ: Խորհրդի կողմից հաստատվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների անվանական կազմը, որը տնօրենի կողմից հրապարակվում և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին երեք աշխատանքային օրվա ընթացքում:

11. Ուսման վարձի մասնակի փոխհատուցման չափը, չի կարող փոքր լինել, կիսամյակային ուսման վարձի 20 % - ից, և չի կարող գերազանցել կիսամյակային ուսման վարձի 80% - ը:

### **III. Ուսանողական նպաստի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը եվ ժամկետները**

12. Սույն կարգի 4 – րդ կետի «ա» ենթակետում նշված՝ առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձ համարվող ուսանողներն ուսանողական նպաստներ ստանալու նպատակով գրավոր ձևով դիմում են Քոլեջի տնօրենին մինչև առաջին ուսումնական տարվա սեպտեմբերի 15 – ը՝ դիմումին կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) մահացած ծնողներ ունեցող ուսանողները՝ ծնողների մահվան վկայականների պատճենները,

բ) դատական կարգով ծնողական իրավունքից զրկված ծնողների երեխաները՝ ծնողական իրավունքից զրկելու մասին դատարանի վճիռը,

գ) ծննդյան վկայականի պատճենը:

13. Սույն կարգի 4 – րդ կետի «բ» ենթակետում նշված՝ 1 – ին ու 2 – րդ խմբերի հաշմանդամ և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներն ուսանողական նպաստներ ստանալու նպատակով մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15 – ը գրավոր ձևով դիմում են Քոլեջի տնօրենին՝ դիմումին կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) 1 – ին և 2 – րդ խմբի հաշմանդամ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունենալու մասին, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դառնալու մասին վկայականը (տեղեկանքը)՝ տրված տվյալ ուսանողի բնակության վայրը սպասարկող բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովի կողմից:

բ) անձնագրի պատճենը:

14. Սույն կարգի 4 – րդ կետի «գ» ենթակետում նշված՝ զոհված զինծառայողի երեխա – ուսանողներն ուսանողական նպաստներ ստանալու նպատակով մինչև առաջին ուսումնական տարվա սեպտեմբերի 15 – ը գրավոր ձևով դիմում են Քոլեջի տնօրենին՝ դիմումին կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) տեղեկանք պետական իրավասու մարմիններից՝ զոհված զինծառայողի երեխա լինելու մասին.

բ) ծննդյան վկայականի պատճենը:

Իսկ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից գորացրված և գորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում Քոլեջ ընդունված ուսանողները՝

ա) զինվորական գրքույկը.

բ) անձնագրի պատճենը:

15. Սույն կարգի 4 – րդ կետի «դ» ենթակետում նշված՝ պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներն ուսանողական նպաստներ ստանալու նպատակով մինչև առաջին ուսումնական տարվա սեպտեմբերի 15 – ը գրավոր ձևով դիմում են Քոլեջի տնօրենին՝ դիմումին կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) տեղեկանք պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններից՝ պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցման գործուղում ունենալու մասին.

բ) անձնագրի պատճենը:

16. Սույն կարգի 4 – րդ կետի «ե» ենթակետում նշված՝ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներն ուսանողական նպաստներ ստանալու նպատակով գրավոր ձևով դիմում են Քոլեջի տնօրենին մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 15 – ը: Դիմումին կից ներկայացվում է

ա) տեղական ինքնակառավարման մարմնից տեղեկանք՝ բնակության վայրի մասին.

բ) անձնագրի պատճենը:

17. Սույն կարգի 4 – րդ կետի «ե» ենթակետում նշված՝ նախորդ ուսումնական կիսամյակում վարկանիշային գնահատման համակարգով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն ուսանողական նպաստներ ստանալու նպատակով գրավոր ձևով դիմում են Քոլեջի տնօրենին մինչև յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 15 – ը և փետրվարի 15 – ը: Դիմումին կից ներկայացվում է նախորդ ուսումնական կիսամյակի առաջադիմության վերաբերյալ տեղեկանք՝ հաստատված տվյալ բաժնի վարիչի կողմից:

18. Սույն կարգի 7 – թղ կետում նշված ուսանողները ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում ստանալու նպատակով մինչև սեպտեմբերի 15 – ը դիմում են Քոլեջի տնօրենին ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.
- 18.1. «ա» ենթակետում նշված ուսանողներն իրենց բնակության վայրը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային կենտրոններից տեղեկանք՝ աղքատության ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված լինելու մասին,
- 18.2. «բ» ենթակետում նշված ուսանողները՝ ծնողներից մեկի մահվան վկայականի կամ ծնողներից մեկի վերաբերյալ ծնողական իրավունքից զրկված լինելու մասին դատարանի որոշումը,
- 18.3. «գ» ենթակետում նշված ուսանողները՝ տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմնից՝ կամ համատիրությունից ընտանիքի կազմի վերաբերյալ,
- 18.4. «դ» ենթակետում նշված ուսանողները՝ դիմումում նշում են այն ուսանողների (քույր, եղբայր) անունները, մասնագիտությունը, կուրսը, որոնք սովորում են ուսման վճարովի համակարգում,
- 18.5. «ե» ենթակետում նշված ուսանողները՝ տեղեկանք իրենց բնակության վայրի բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովից 1 – ին և 2 – թղ խմբի հաշմանդամ ծնողներ ունենալու մասին,
- 18.6. «զ» ենթակետում նշված ուսանողները՝ տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմիններից բնակության հասցեի վերաբերյալ և դպրոցից ծնողների աշխատանքային գործունեության մասին,
- 18.7. Սույն կարգի 7 – թղ կետ «թ» ենթակետում նշված ուսանողները Քոլեջի տնօրենին ուղղված դիմումի մեջ նշում են Քոլեջում աշխատող ծնողի աշխատանքային գործունեության մասին:
19. Ուսանողի դիմումների ընդունումն ու հաշվառումն իրականացվում է Քոլեջի գործավարության կարգին համապատասխան:
20. Ուսանողական նպաստներ տրամադրելու համար տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ բաղկացած մանկավարժադասախոսական անձնակազմի և ուսխորհրդի ներկայացուցիչներից :
21. Հանձնաժողովը մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 25 – ը քննարկում է ուսանողների դիմումները, բաժնի վարիչների առաջարկությունները կազմում է ուսանողական նպաստ ստանալու իրավունք ունեցող ուսանողների ցուցակը և ներկայացնում է տնօրենին՝ հաստատման:
22. Հավասար միավորների դեպքում ուսանողական նպաստ ստանալու առաջնությունը տրվում է 2 կիսամյակների (1 ուսումնական տարվա) ընթացքում

մասնագիտական առարկաներից առավել բարձր գնահատականներ ստացած ուսանողներին: Դրանց հավասարության դեպքում ուսանողական նպաստը հավասարապես բաժանվում է նպաստառուների միջև:

23. Հարգելի պատճառով (առողջական վիճակի պատճառով կամ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի ակադեմիական արձակուրդում գտնվելու կամ ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքերում) ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

#### **IV. Պետական եվ ներքուլեջային կրթաթոշակ տրամադրելու կարգը**

##### **ա) Պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը**

24. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին:

25. ա) առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձանց, վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով.

բ) 1 – ին ու 2 – ըր խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, որոնց հերթական քննությունները և ստուգաթքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից.

26. Պետական կրթաթոշակները տրամադրվում են սույն կարգի 20 – ըր կետում նշված հանձնաժողովի մասնագիտական վերլուծության արդյունքում կազմված եզրակացության հիման վրա:

27. պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին:

28. Պետական կրթաթոշակները տրամադրվում են այն ուսանողներին, որոնք բավարարում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ուսանողի հասարակական ակտիվությունը և պատշաճ վարքագիծը բնութագրող հետևյալ ցուցանիշները՝

ա) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին.



բ) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում)։

գ) մասնակցությունը միջբուլեջային, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին։

դ) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ։

29. Ուսանողի պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող երկու շաբաթվա ընթացքում՝ Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) նիստում։ Քոլեջի տնօրենի ներկայացմամբ խորհուրդը քննարկում է կիսամյակի արդյունքները և սույն կարգի 28 – ը կետով նախատեսված պայմաններին բավարարելու դեպքում սահմանում է պետական կրթաթոշակներ ստացող ուսանողների անվանական կազմը, որը տնօրենի կողմից հրապարակվում ու պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում։

30. Պետական կրթաթոշակների չօգտագործված մասը հատկացվում է սույն կարգի 16 – ը կետի պահանջները բավարարող ուսանողներին՝ մրցութային կարգով։

31. Հարգելի պատճառով (առողջական վիճակի պատճառով կամ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի ակադեմիական արձակուրդում գտնվելու կամ ժամկետային զինձառայության գորակոչվելու դեպքերում) ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած՝ կրթաթոշակ ստանալու իրավունքը։

32. Պետական կրթաթոշակների ձևակերպման գործընթացն իրականացնում է ուսումնական հաստատությունը։

33. Ուսումնական հաստատությունը կարող է սեփական միջոցների հաշվին սահմանել ներբուլեջային կրթաթոշակներ։

## **բ) Ներբուլեջային կրթաթոշակ տրամադրելու կարգը**

34. Քոլեջը իր միջոցների հաշվին սահմանում է «Գերազանց առաջադիմության համար» ներբուլեջային ուսանողական ամենամյա անվանական (այսուհետ՝ Անվանական կրթաթոշակ) կրթաթոշակ։

35. Անվանական կրթաթոշակ տրվում է քոլեջի ավարտական կուրսի այն ուսանողներին, ովքեր նախորդ 2 ուսումնական տարիներին (չորս կիսամյակ)

անընդմեջ ունեցել են բացարձակ գերազանց առաջադիմություն, ցուցաբերել են հասարակական ակտիվություն և պատշաճ վարքագիծ:

36. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հանձնաժողովը համապատասխան բաժնի, ամբիոնի վարիչներից, դասղեկներից, ուսումնական մասից ստանում է առաջարկություններ սույն կարգի 28 – թղ կետի պահանջներին բավարարող ուսանողներին Անվանական կրթաթոշակ տրամադրելու մասին:

37. Հանձնաժողովն Անվանական կրթաթոշակ ստանալու մասին որոշումը կայացնում է սույն կարգի 29 – թղ կետում նշված ընթացակարգին համապատասխան:

## **V. Եզրափակիչ դրույթներ**

38. Սույն կարգի դրույթները գործողության մեջ են դրվում 2018 թվականի սեպտեմբերի 1 – ից: